ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Մենք, ներքո ստորագրողներս , մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը /այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս տնօրենի ժ/պ Ք. Հակոբյանի
մյուս կողմից «ՀՇՇՀ » ԲԲԸ
/ձեռնարկության , հաստատության , կազմակերպության անվանումը/

ՏՆՕՐԵՆ՝ Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
/պաշտոն, անուն , ազգանուն /

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Հաշվապահական հաշվառում»մասնագիտությունների պրակտիկան անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը :

1. Ձեռնարկությունը /հաստատությունը , կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան 30 տեղ

հատկացնել ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան անցկացնելու համար :

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան/ իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխումը , որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատությանը , կազմակերպության / գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը:

1.3 Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման :Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը :

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության , որակի և կարգապահության մասին :

2. ԿՏՊՔ-ն պարտավորվում է՝

2.1 ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան սկսելուց մեկ ամիս առաջ ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / հետհամաձայնեցնել
պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը :

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում /հաստատությունում, կազմակերպությունում /սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը :

2.3 Ձեռնարկության /հաստատության, կազմակերպության/ տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի, հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար :

2.4. Պրակտիկան սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ նամակով ձեռնարկության /հաստատությանը, կազմակերպությանը/ ներկայացնել պրակտիկա անցկացնող ուսանողների ցուցակը :

3 .Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է երեք տարի ժամկետով, սկսած **2024** թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 1-ը :

6 .Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում, երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ ռեկվիզիտները :

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ 2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԵՌ. 060-27-32-32 Հ/Հ160254503016	«ՀՇԵՇՁ» ԲԲԸ Ք.ՀՐԱԶԴԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ՀԵՌ. **0223-604-94** Հ/Հ 2476400040620999
ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ _____ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ	ՏՆՕՐԵՆ _____ Է.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՊՐԱԿՏ.ՂԵԿԱՎԱՐ _____ Ա. ՍԵՄԻՐՋՅԱՆ «02» 09 2024թ.	«_____» _____2024թ.